ԱՎԱՆԴՈՒՅԹ

# ԱՅԱԶՄԱՅՈՒՄ 28-ՐԴ ԱՆԳԱՄ ԹԵՎԱԾԵՑ ՀԱՎԱՍՈՒ ՀՈԳԵՀՄԱ ԵՐԳԸ

*Սեպտեմբերի 2-ին, Ծալկայի մունիցիպալիտետի Այազմա գյուղում աշուղական երգի տոն էր՝ նվիրված այս գյուղի ծնունդ, ժողովրդի կողմից սիրված, հանրահայտ Գուսան Հավասուն:*

Ավանդական տոնակատարությանը ներկաները, ինչպես միշտ, իրենց խոնարհումը բերեցին արվեստի մեծ նվիրյալին:

Հանդիսույթը ներածական խոսքով բացեց Ծալկայի քաղաքապետարանի առողջապահության, մշակույթի եւ սպորտի ծառայության ղեկավար Յուրի Խեչոյանը: Նա իր խոսքում ընդգծեց, որ 1991 թվականից մեկնարկած եւ ավանդաբար ամեն տարի սեպտեմբերին նշվող Գուսան Հավասու մեծարման տոնը վաղուց դադարել է մեկ համայնքին պատկանելուց եւ դարձել երկրի աշուղական արվեստի սիրված տոներից մեկը, նաեւ հայ-վրացական բարեկամության դրսեւորում, որին իրենց մասնակցությունն են բերում հյուրեր՝ Վրաստանի եւ Հայաստանի տարբեր շրջաններից:





Գուսան Հավասու կյանքի եւ ստեղծագործության մասին ելույթ ունեցավ Ծալկայի մունիցիպալիտետի սակրեբուլոյի պատգամավոր, Օզնի գյուղի հանրային դպրոցի տնօրեն Ռազմիկ Հանեսյանը:

Օրը խորհրդանշող ողջույնի խոսքով ներկաներին դիմեցին Ծալկայի մունիցիպալիտետի քաղաքապետ Իլիա Սաբաձեն, Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության նախագահ Ժորա Սնխչյանը, բանաստեղծ Ալբերտ Իսոյանը, Երեւանից ժամանած եւ առաջին անգամ այս տոնին մասնակցող, Գուսան Հավասու եղբորորդի Արմեն Մարկոսյանը:

Տոնախմբության համերգային մասը զարդարեցին անմահ գուսանի երգի շնորհաշատ մեներգիչներ Հայաստան Իսպիրյանը եւ Էդուարդ Թամարյանը, ինչպես նաեւ «Հայարտուն» կրթամշակութային կենտրոնի ստեղծագործական խմբերը: Հնչեցին հայկական ու վրացական երգ ու պարի կատարումներ, որոնք ներկայացվեցին Ծալկայի շրջանային վարչությանը կից ստեղծագործական խմբերի կողմից, այդ թվում՝ Օզնի գյուղի պարային խումբը:

***ԱՆԱՀԻՏ ՀԱՆԵՍՅԱՆ***

***Թբիլիսիի պետական բժշկական համալսարանի ուսանողուհի***

ՌԼՈՐՏ

# ԿԱՐՏՈՖԻԼԻ ԺԱՄԱՆԱԿԻՑ ՇՈՒՏ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ՊԱՏՃԱՌԸ

*Ախալքալաքի մունիցիպալիտետի գյուղերում ոչ մասսայական, սակայն արդեն սկսվել է կարտոֆիլի բերքահավաքը:*

Դեռ նոր է սկսվել աշունը, սակայն մունիցիպալիտետի գյուղերի բնակիչներն արդեն սկսել են բերքահավաքը, թե ինչի՞ համար են այսքան շտապում, Jnews-ը փորձեց ճշտել հավաքողներից:

Կաջո (պաշտոնական՝ Կոճիո) գյուղի բնակիչը հավաքում է կարտոֆիլը, քանի որ գումար է հարկավոր:

- Այս տարի ենք շուտ սկսել, քանի որ փող է պետք: Պետք է տանենք Թբիլիսի վաճառելու, թե չէ դեռ հիմնական բերքահավաքը չենք սկսել,- ասաց Կաջո գյուղի բնակիչը:

Օրջա, Բարալեթի եւ մյուս գյուղերում նույնպես որոշ բնակիչներ բերքահավաքը ժամանակից շուտ են սկսել, պատճառաբանումը նույնն է՝ ֆինանսական խնդիրներն են:

Հարցի վերաբերյալ Վրաստանի շրջակա միջավայրի պահպանության եւ գյուղատնտեսության նախարարության Ախալքալաքիի ներկայացուցիչ Ռամազ Գոգոլաձեն ասաց, որ բերքահավաքը շուտ են սկսել նաեւ այն ֆերմերները, ովքեր շատ են ցանել:

- Հիմա ոչ բոլորն են սկսել բերքահավաքը, այն մարդիկ են շտապում, ովքեր շատ են ցանել, եւ ովքեր ֆինանսների կարիք ունեն, իսկ մասսայական բերքահավաքը, հավանաբար սեպտեմբերի 20-ից կսկսվի,- ասաց Ռամազ Գոգոլաձեն:

Նա հավելեց նաեւ, որ ջերմաստիճանի սովորականից առավել բարձրացումը մեծ ազդեցություն է ունեցել նաեւ մեր երկրամասի վրա: Եթե առաջներում կարտոֆիլը ցանում էին մայիս ամսվա վերջերին, հիմա արդեն ապրիլի 15-ից է սկսվում:

Կարտոֆիլի աճի համար պահանջվում է 120-130 օր, սակայն շուտ հա-



վաքված կարտոֆիլը նկուղներում պահել չի լինի, քանի որ նկուղի սառնությունն ու կարտոֆիլի տաքությունը մթերքը կփչացնեն:

Ժողովրդի մեջ տարածված այն խոսակցությունը, թե կարտոֆիլը անպայման պետք է ցրտահարությունից հետո հանել հողից, Ռամազ Գոգոլաձեն մեկնաբանեց հետեւյալ կերպ.

- Ցրտահարությունը կարեւորում են նրա համար, որ կա ուշահաս կարտոֆիլ, որ արմատներից չեն անջատվում եւ ցրտահարությունը օգնում է, որպեսզի արմատներից անջատվի, նաեւ կճեպը չի վնասվի,- ասաց նա:

Ըստ մասնագետի, անցած տարվա համեմատ, այս տարի կարտոֆիլի գինը ավելի մատչելի կլինի բոլորի համար:

- Գինը հարմար է ֆերմերների համար, կարտոֆիլը վաճառվում է հենց դաշտում, իսկ դաշտից վաճառելը բոլորս էլ գիտենք, որ ավելի հարմար ու շահավետ է, գինը 60-70 թեթրի է,- հավելեց նա:

Պետք է նշել, որ խոշոր ֆերմերները ունեն իրենց մշտական գնորդը, իսկ փոքր հողագործները վաճառում են կա'մ դրսից եկած գնորդներին, կա'մ իրենքերն են տանում Ախալքալաքից դուրս վաճառելու:

***ԳԱՅԱՆԵ ԱԿՈՁՅԱՆ***

***ք.Ախալքալաքի***


ՄԱԳԹԻ
MAGTI

**ՄԱԳԹԻԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻՆ**

ՀԱՄԱՑԱՆՑ, ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ԱՌԱՆՑ ԼԻՄԻՏԻ ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԲՋՋԱՅԻՆՈՎ,
ԱՄՍԱԿԱՆ՝ 29 ԼԱՐԻՈՎ

Օպտիկական – մանրաթելային համացանց
20 մգ/վրկ փաթեթ

IP հեռուստատեսություն
Վերափաթեթավորման գործառույթով – 99 ալիք

Բջջային հեռախոս
Սերվիս «Մերոնք», առանց լիմիտի խոսակցություն Մագթիկոմի բջջային ցանցով ընտանիքի 4 անդամների միջև

Նվեր
- WiFi սարք տանը՝ համացանցի ազդանշանի տարածման համար
- Հեռուստատեսության 1 լրացուցիչ փաթեթ

Ծրագրերի մուտքագրումը՝ անվճար
Առաջարկությունը ուժի մեջ է միացումից հետո 2 տարվա ընթացքում

Կապվեք՝ 11 00 11 - բջջային ցանցով,
032 217 00 00 – ցանկացած ցանցով
Մագթիկոմի ցանցով հեռախոսազանգը անվճար է:
www.magticom.ge


ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՒԹՅՁՈՒՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

# ՎԱՆԱՁՈՐԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԲԱԹՈՒՄԻԻ ՕՐՎԱ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՀՅՈՒՐ

***Աջարիայի Ինքնավար Հանրապետության մայրաքաղաքի՝ Բաթումիի օրվա տոնակատարությանը իր մասնակցությունն էր բերել Հայաստանի Վանաձորի քաղաքապետարանի պատվիրակությունը՝ քաղաքապետ Մամիկոն Ասլանյանի գլխավորությամբ: Պատվիրակության կազմում էին քաղաքապետարանի կրթության եւ գիտության բաժնի ղեկավար Գոռ Բադալյանը եւ աշխատակազմի ղեկավար Արթուր Օհանյանը:***



Մամիկոն Ասլանյանը (ձախից) եւ Լաշա Կոմախիձեն

2018 թվականի օգոստոսի 2-3-ին, տոնակատարության շրջանակներում, Վանաձորի քաղաքապետարանի պատվիրակությունը, Բաթումիում Հայաստանի Գլխավոր հյուպատոս Եղիշե Սարգսյանի ընկերակցությամբ, աշխատանքային հանդիպումներ ունեցավ Աջարիայի Ինքնավար Հանրապետության ղեկավար Թոռնիկե Ռիժաձեի, Բաթումիի քաղաքապետ Լաշա Կոմախիձեի հետ:

Պատվիրակությունն այցելեց Վիրահայոց թեմի Սուրբ Փրկիչ եկեղեցի, եղավ թեմի «Ալեքսանդր Մանթաշյանց» կրթամշակութային եւ երիտասարդական կենտրոնում, ծանոթացավ կենտրոնի աշխատանքներին, ապագայի ծրագրերին:

# ԱՎԱՆԴՈՒՅԹԻ ՎԵՐԱԾՎԱԾ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

***Արդեն երրորդ տարին անընդմեջ, Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի եւ Աջարիայի, Գուրիայի ու Իմերեթիի հայության, Բաթումիի «Սուրբ Փրկիչ» եկեղեցու հոգեւոր հովիվ Տեր Արարատ քահանա Գումբալյանի նախաձեռնությամբ, սեւծովյան Քոբուլեթի քաղաքում կազմակերպվում է Հայաստանի տարբեր շրջանների երեխաների հյուրընկալությունը եւ նրանց ամառային հանգստի ուրախ ու հետաքրքիր անցկացումը:***

2018 թվականին եւս չխախտվեց Վիրահայոց թեմի Բաթումիի Սուրբ Փրկիչ եկեղեցու ավանդույթ դարձած այս բարեգործական նախաձեռնությունը: Ամառային շոգ օրերին Սեւ ծովի ափին անցկացրած արձակուրդի օրերը անմոռանալի դարձան Գեղարքունիքի մարզի տարբեր շրջանների այն 16 անչափահասների համար, ովքեր թեմի Մարտունու շրջանի հոգեւոր հովիվ Գեւորգ քահանա Տեր-Բարսեղյանի գլխավորությամբ օգոստոսի 28-ից սեպտեմբերի 4-ը հյուրընկալվեցին Քոբուլեթիում:

Գեղարքունիքի մարզի երեխաների ծովափնյա հանգստի իրականացման գործում իրենց բարեգործությունը կատարեցին Geneva TOURS տուրիստական ընկերությունը՝ տնօրեն Արա Մարուքյանի գլխավորությամբ, տարբեր հյուրանոցային համալիրներ՝ Գրիգոր Մկրտչյանի, Էդուարդ Միքայելյանի, Նառա Գալստյանի ղեկավարությամբ, ինչպես նաեւ Բաս-Վոյաժ տրանսպորտային ընկերությունը, որը ապահովեց երեխաների ուղեւորությունը Բաթումի եւ վերադարձը հայրենիք:

# ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❋ ԱՅԼԱԶԱՆ ❋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

## ԱՎԵԼԻ ՈՒ ԱՎԵԼԻ ՔԻՉ ԵՆ ԿԱՐԴՈՒՄ



***Ցավով հետեւում եմ երեխաներիս ու համոզվում, որ գիրքը, ընդհանրապես, նրանց չի հետաքրքրում: Առավոտից նստում են համակարգչի առջեւ ու սկսում «թափառել» սոցիալական ցանցերում: Հետաքրքիր է` դա բնորոշ է միայն ի՞մ երեխաներին, թե՞ համատարած է:***

*Վ. Մուրադյան*

*Թբիլիսի*

Ցավոք, ժամանակակից դեռահասների մինչեւ 20 տոկոսն է ամեն օր գիրք, թերթ կամ ամսագիր կարդում, բայց նրանց ավելի քան 80 տոկոսը մշտապես նստած է սոցիալական ցանցերում:

- Նախորդ սերունդների համեմատությամբ, 2010-ական թվականների դեռահասներն ավելի շատ ժամանակ են անցկացնում ցանցում եւ ավելի քիչ են գիրք կարդում ու հեռուստացույց դիտում:

Գաջեթներով շփումը փոխարինել է ընթերցանությանը եւ հեռուստաէկրանին ֆիլմեր դիտելու ուրախությանը,- հայտարարել է Սան Դիեգոյի համալսարանից Ջին Թվենգեն (ԱՄՆ): Ներկայումս թվային աշխարհը դեռահասներից ու ավագներից եւ միջին տարիքային կատեգորիաներից մոտավորապես կրկնակի ավելի շատ ժամանակ է «կլանում» եւ փաստորեն խլում նրանց ամբողջ ազատ ժամանակը: Ինտերնետի այսօրինակ էքսպանսիան երեխաների կյանքում, գիտնականների խոսքով, հնարավոր է դարձել նրա պատճառով, որ դեռահասները գրեթե լիովին դադարել են գրքեր, թերթեր ու ամսագրեր կարդալ:

- Գրքերից հրաժարվելը,- ինչպես նշում է Թվենգեն,- բացասաբար է ազդում դեռահասների առաջադիմության վրա` քոլեջներ եւ համալսարաններ ընդունվելիս: Բացի այդ, գիտնականների կարծիքով, այդ ֆենոմենը կարող է բացասաբար ազդել նրանց քաղաքական գրագիտության եւ բարդ խնդիրներն ընկալելու կարողության վրա:

ԳԻՏԵ՞Ք, ԱՐԴՅՈՔ...

## ԻՆՉՊԵՍ ԵՆ ԼԵՂԱՊԱՐԿՈՒՄ ՔԱՐԵՐ ԱՌԱՋԱՆՈՒՄ

Քարեր են առաջանում այն ժամանակ, երբ չափից ավելի են լինում լեղու աղերը, խոլեստերինը եւ կալցիումային այլ նյութերը: Քարերը լեղապարկում լեղու բյուրեղացման արդյունքում են ձեւավորվում, երբ խոլեստերինն ավելի շատ է լինում, քան լեղին կարող է այն լուծել: Քարերի առաջացմանը նպաստող մյուս գործոններից են ճարպակալումը, յուղալի սնունդը եւ հորմոնալ դեղերը: Լեղաքարերը սովորաբար երկար ժամանակ, քանի դեռ փոքր են, աննկատ են մնում: Խոշոր քարերն արդեն որոշակի ախտանշաններ են առաջացնում: Դրանք են` հանկարծակի ցավ ստամոքսում, սրտխառնոց, փսխում, մեջքի հանկարծակի ցավ` թիակների միջեւ, հաճախակի զկռտոց, շուրթերին` մուգ բծեր, բորբոքված լնդեր, ճակատի հատվածում յուղոտ մաշկ: Մաշկի դեղնությունը հուշում է, որ լեղին չի կարողանում բարակ աղիք մուտք գործել:

Այս նշանների դեպքում պետք է անպայման դիմել բժշկի:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է...

## ԿՅԱՆՔԸ ՓՐԿԵԼ... ԵՐԳՈ՞Վ

Իսպանական Los Del Rio խմբի Macarena երգը կարող է օգնել սրտի ոչ անմիջական մերսման ժամանակ. դրա րոպեում 103 զարկով ռիթմը համապատասխանում է կրծքավանդակին սեղմումների անհրաժեշտ հաճախությանը: Իսպանացի գիտնականների հետազոտության մասին գրել է Science Alert-ը:

Բարսելոնայի համալսարանի բժիշկների կազմակերպած գիտափորձին մասնակցել է 164 ուսանող: Նրանց բաժանել են երեք խմբի. առաջինը կրծքավանդակի սեղմում է կատարել ամանակացույցի (մետրոնոմ) զարկերի ներքո, երկրորդ խմբի կամավորներին խնդրել են իրենք իրենց դունդունալ Macarena-ն, երրորդ խումբը դարձել է ստուգիչ: Սրտի երկուրոպեանոց մերսումից հետո պարզվել է, որ ամենից լավ գլուխ են հանել այն ուսանողները, որոնք օգտվել են ամանակացույցից.




այդ խմբի մասնակիցների 91 տոկոսը պահպանել է րոպեում 100-120 սեղմման ճիշտ տեմպը: Երկրորդ տեղում այն կամավորներն էին, ովքեր երգել են իսպանական երգը. նրանց 74 տոկոսը մտել է ռիթմի մեջ: Ամենից վատ են կատարել այն ուսանողները, որոնք չեն օգտվել ո'չ ամանակացույցից, ո'չ Macarena-ից, հարկավոր հաճախությունը հաջողվել է պահպանել նրանց սոսկ 21 տոկոսին:

Հետազոտության հեղինակները նշում են, որ, թեեւ ամանակացույցի արդյունավետությունը եղել է ավելի բարձր, միշտ չէ, որ այն հեշտ է գտնել, ուստի 90-ական թվականների հիթի իմացությունը կարող է փրկել ինչ-որ մեկի կյանքը:

ԱՌՕՐԵԱԿԱՆ

## ԳԵՂԵՑԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ՁԵՌՔՈՒՄ Է

*«Տգեղ կանայք չկան, կան ծույլ կանայք». այսպիսի մի հին ասացվածք կա: Ինչպես լինել գեղեցիկ, ճիշտ խնամել մաշկը եւ միշտ ունենալ հաճելի տեսք` անկախ տարիքից: Փորձեք պատասխանել այս հարցերին:*



### ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԱՅԵԼԻՆ

Հաճախ հարց է հնչում, թե որ տարիքից պետք է խնամել մաշկը: Ընդհանրապես, մաշկը սկսում է իր առաձգականությունը կորցնել 30 տարեկանից հետո, սակայն դա խիստ անհատական է, մեծապես կախված է օրգանիզմի ընդհանուր վիճակից եւ բազմաթիվ այլ գործոններից: Իսկապես, ինչպես չինացիներն են ասում, մաշկը առողջության հայելին է: Կան առողջական մի շարք խնդիրներ, որոնք բացասաբար են անդրադառնում մաշկի վիճակի վրա: Դրանցից են փորկապությունը, վահանագեղձի հիվանդությունները, դաշտանային ցիկլի խանգարումները, վիտամինների պակասը, գերհոգնածությունը, նյարդային համակարգի գրգռված վիճակը, դեպրեսիաները, կամ քթի անկյունում անսպասելի հայտնված բշտիկը, որն այնքան էլ անմեղ բան չէ: Այն վկայում է մարսողական համակարգի ոչ նորմալ վիճակի կամ նախորդ օրն ընդունած սննդի մասին` կծու, տապակած, ապխտած, կամ էլ շոկոլադ: Եթե թվարկված սննդից չեք ընդունել, ամենայն հավանականությամբ, խնդիրը կապված է կամ փորկապության, կամ էլ սնունդը վատ յուրացնելու հետ:

### ԿԱՆՈՆՆԵՐ` ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ

Ցանկացած տեսակի մաշկ պահանջում է խնամք եւ առաջին հերթին` մաքրում: Որոշ կոսմետոլոգներ պնդում են, որ մաշկը պետք է մաքրել օրը երեք անգամ, սակայն մասնագետների մեծ մասը գտնում է, որ երկու անգամն էլ բավական է: 5-10 րոպե պետք է հատկացնել մաշկի խնամքին ինչպես քնելուց առաջ, այնպես էլ` առավոտյան` տնից դուրս գալուց առաջ:

Իհարկե, կարող են լինել նաեւ անկանխատեսելի իրավիճակներ, երբ ցերեկվա ժամերին հարկավոր է թարմացնել դիմահարդարումը. այդ դեպքում պետք է ցերեկը նույնպես մաքրել դեմքը:

### ԱՆՀԱՏԱԿԱՆ ԽՆԱՄՔ

Գոյություն ունի մաշկի երեք հիմնական տեսակ` նորմալ, չոր եւ ճարպոտ: Մաշկի տեսակով էլ պայմանավորված է նրա խնամքը: Տարիների ընթացքում մաշկի տեսակը փոխվում է: Օրինակ` առողջ, նորմալ մաշկը հաճախ դառնում է չոր: Կանանց 80 տոկոսի մոտ հասուն տարիքում մաշկը չորանալու հակում ունի: Առավել հաճախ մաշկը ճարպազրկվում եւ չորանում է սխալ խնամելու հետեւանքով, ինչպես օրինակ` մաշկը հաճախ օճառով լվանալը կամ դեմքը շատ տաք ջրով լվանալը, ինչպես նաեւ դեմքը լվանալուց հետո խոնավ թողնելը:

**Նորմալ մաշկը** լինում է փափուկ, առաձգական, թարմ, հարթ` ո'չ յուղոտ, ո'չ էլ չոր, ինչպես արտաքին տեսքից, այնպես էլ` շոշափելիս: Նորմալ մաշկ հանդիպում է երեխաների մոտ մինչեւ հասունացումը: Մեծահասակների մոտ այն հազվադեպ է հանդիպում, նույնիսկ` երիտասարդ կանանց մոտ, մաշկը լավ պահպանվում է լավագույն դեպքում մինչեւ 35-45 տարեկանը: Նորմալ մաշկի խնամքը համեմատաբար հեշտ է: Կարելի է օգտագործել ցանկացած տեսակի խոնավացնող կամ սնուցող քսուքներ:

**Ճարպոտ մաշկին** բնորոշ է առատ ճարպի արտադրությունը: Ճարպագեղձերի չափից ավելի ակտիվ գործունեության հետեւանքով, դեմքը դառնում է յուղոտ եւ փայլուն, մաշկը լինում է կոպիտ, երբեմն` կոշտացած եւ անհարթ:

Ճարպոտ մաշկն այնքան էլ առաձգական չէ, հետեւաբար, այն մաքրելու համար պետք է օգտագործել ոչ թե տաք, այլ գոլ ջուր: Լվացվելուց հետո, խորհուրդ է տրվում մաշկը ողողել խոտաբույսերի եփուկներով` կալենդուլա, կաղնու տերեւ, հազարաթերթիկ: Այնուհետեւ, օգտագործել որեւէ տոնուսավորող միջոց, զանազան շիճուկներ, քսուքներ ճարպոտ մաշկի համար: Առավոտյան ընտրել ցերեկային, երեկոյան` գիշերային քսուքներ:

Ճարպոտ մաշկի դեպքում խորհուրդ է տրվում հետեւել սննդին, պահպանել որոշակի սննդակարգ:

**Չոր մաշկ.-** Չոր մաշկի ամենամեծ թերությունն այն է, որ բերում է կնճիռների վաղաժամ զարգացման: Չոր մաշկը ցուրտ եղանակին խորհուրդ է տրվում լվանալ սենյակային ջերմաստիճանի ջրով, իսկ տաք եղանակին` սառը ջրով, նախօրոք դեմքին քսելով բուսական յուղ:

Չոր մաշկի դեպքում հարկավոր է օգտագործել դեմքը սնուցող յուղոտ քսուքներ, նաեւ քսուքներ, որոնք վիտամինացված են, ինչպես նաեւ հիալուրոնաթթու, միզաթթու եւ ցինկ պարունակող բիոքսուքներ: Կարելի է օգտագործել տանը պատրաստված դիմակներ:

## ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Հիշի'ր, հայ զորական, անպարտելի է մնում միայն այն դրոշակը, որը պարզվում է ցեղի անունով եւ ցեղի համար:

***ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ***
***(1886-1955)***
***Հայ ռազմական գործիչ***

Որքան շուտ անցան ժամերը ջահել, Ես ափսոսում եմ որ աղջիկներին չեմ կարող նայել:

***ԻՈՍԵԲ ՆՈՆԵՇՎԻԼԻ***
***(1918-1980)***
***Վրաց բանաստեղծ***

Հաճախ համեստությունն ընդունում են թուլության եւ անվճռականության փոխարեն, բայց երբ փորձը ցույց է տալիս մարդկանց, որ իրենք սխալվել են, այնժամ համեստությունը նոր հմայք, ուժ եւ ակնածանք է տալիս բնավորությանը:

***ԼԵՎ ՏՈԼՍՏՈՅ***
***(1828-1910)***
***Ռուս գրող***

Գոյություն ունի արդարության երկու հիմունք` ոչ ոքի չվնասել եւ օգուտ բերել հասարակությանը:

***ՑԻՑԵՐՈՆ***
***(մ.թ.ա.106-43)***
***Հին հռոմեական քաղաքական գործիչ, փիլիսոփա***

Արվեստ արարել կարող է միայն ընտրյալը, իսկ արվեստը սիրել` յուրաքանչյուր մարդ:

***ՅԱԿՈԲ ԳՐՅՈՒՆ***
***(1837-1916)***
***Ավստրիացի ջութակահար***

Հեռու մնացեք փոքրոգի մարդուկներից, որոնք փորձում են ձեզ զրկել արժանապատվությունից: Ավելի լավ է ընկերություն անել մեծահոգի մարդկանց հետ, որոնք կարող են ձեզ ստիպել զգալ սեփական ոգու վեհությունը:

***ՄԱՐԿ ՏՎԵՆ***
***(1835-1910)***
***Ամերիկացի գրող***

Դաժանորեն կյանք նետվելով` պտուղը ստիպված է մոռանալ բավարարման ամենասիրած միջոցները եւ հարմարվել նորերին: Այդ դաժան խաղը կրկնվում է զարգացման յուրաքանչյուր նոր փուլ անցնելիս:

***ՇԱՆԴՈՐ ՖԵՐԵՆՑ***
***(1873-1933)***
***Հունգար հոգեվերլուծող***

Բժշկությունը, իհրավի, ամենաազնիվն է բոլոր արվեստներից:

***ԱՐԻՍՏՈՖԱՆ***
***(մ.թ.ա.446-386)***
***Հին հույն կատակերգակ***

Ծերությունը մահվան նախադպրոցական բաժինն է` կամաց-կամաց ծանոթացնում է մարդուն հանգուցյալ աշխարհի մեկնելու ահեղ պայմանների հետ:

***ԼՈՌԱՆԴ ԵՁՈՅԱՆ***
***Ախալքալաքի, գ. Դիլիսկա***

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ՄԵՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ԵՆ ԵՎ ՊԵՏՔ Է ՁԵՐԲ ԼԻՆԵՆ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Հայաստանի վարչապետը հույս հայտնեց, որ Վրաստան կատարած իր այցը այդ երկրի հետ Հայաստանի հարաբերությունները կդնի նոր հարթակի վրա՝ կարծիք հայտնելով, որ երկու երկրները կկարողանան առավել հզորացնել հարաբերությունները:

- Ինչ վերաբերում է Սամցխե-Ջավախքին, ինչպես գիտեք, այնտեղ ապրում են բազմաթիվ հայեր, եւ իմ հիմնական ուղերձն այն էր, որ Վրաստանը եւ Հայաստանը բարեկամներ են, դրացիներ: Մենք եղբայրական ազգեր ենք, եւ չպետք է լինի մեր հարաբերություններին, բարեկամությանը եւ գործընկերությանը ստվերի տակ դնող որեւէ հանգամանք: Վրաց ժողովուրդը պետք է վստահ լինի, որ Հայաստանի գործողություններում Վրաստանի նկատմամբ որեւէ դավադրություն կամ բացասական նպատակ չկա: Իսկ հայ ժողովուրդը պետք է վստահ լինի, որ Վրաստանի կառավարության եւ վրաց ժողովրդի գործողություններում Հայաստանի դեմ դավադրություն եւ բացասական ասպեկտ չկա: Կարծում եմ՝ մեր կառավարության կոնկրետ խնդիրն է՝ ապահովել այդ բանաձեւի իրականացումը եւ, կարծում եմ, այդ բանաձեւը կլինի մեր լավագույն հարաբերությունների երաշխիքը: Այսպիսով, մենք կկարողանանք մեր հարաբերություններն առավել հզորացնել,- շեշտեց Նիկոլ Փաշինյանը:

## ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԽԹԱՆՈՂ ՕՐԻՆԱԳԻԾ



*Հայաստանի կառավարության հավանությանն արժանացավ «Պետություն-մասնավոր գործընկերության մասին», «ՀՀ հողային» օրենսգրքում եւ հարակից մի շարք օրենքներում լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ կառավարության օրենսդրական նախաձեռնությունը:*

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է պետություն-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) մեխանիզմների կիրառման համար անհրաժեշտ իրավական դաշտի ստեղծում, որը կապահովի ՊՄԳ ծրագրերի կառավարումն ապահովող օրենսդրական եւ ինստիտուցիոնալ շրջանակի կայացումը:

Օրինագծերի փաթեթի շուրջ ծավալվեց մտքերի փոխանակում, որոշ դրույթների վերաբերյալ ներկայացվեցին առաջարկություններ: Ամփոփելով հարցի քննարկումը՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանը նշեց, որ անհրաժեշտ է լրամշակել օրենքների նախագծերը բարձրացված հարցերին հնարավորինս ճշգրիտ ձեւակերպում տալու համար:

## ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ՝ ՄԻԿՐՈԲԻԶՆԵՍԻ ՀԱՄԱՐ

*Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը Հարկային մարմիններին հանձնարարել է, որ միկրոբիզնեսի եւ արտադրության նկատմամբ իրականացվի մեղմ վարչարարություն:*

- Մենք փոքր բիզնեսի համար, որը տարեկան մինչեւ 24 միլիոն դրամի շրջանառություն ունի, կսահմանենք, ըստ էության, սիմվոլիկ հարկ: Փաստացի դա համարյա կլինի հարկի բացակայություն: Խոսքը շրջանառության հարկի մասին է: Այսինքն՝ միկրոբիզնեսը կլինի, հարկային առումով, արտոնյալ պայմաններում,- ասել է Նիկոլ Փաշինյանը:

Վարչապետը ներկայացրեց նաեւ, թե ինչ գաղափարներ են քննարկվում կառավարությունում:

- Սրանք նախագաղափարներ են, ես խնդրում եմ, սրանք չշփոթել արդեն կայացված որոշումների հետ: Կա այսպիսի գաղափար: Օրինակ, եթե մեկն ունի 100 հազար կամ 50 հազար դոլար, ինքը կարող է մտածել ինչ-որ բիզնես ստեղծելու մասին, բայց, եթե մեկն ունի 3 հազար կամ 5 հազար դոլար, եւ ցանկանում է այդ փողը ինչ-որ տեղ ներդնել, ինքը, այսօրվա դրությամբ, այդպիսի հնարավորություն չունի: Մնում է միայն բանկային ավանդի տարբերակը, սակայն դա պասիվ գործունեություն է: Մենք կարծում ենք, որ քաղաքացիներն ավելի ակտիվ ներդրումներ անելու հնարավորություն պետք է ունենան, եւ այս առումով կարեւորում ենք ֆինանսական շուկայի այնպիսի ընկերությունների գոյությունը, որոնք արժեթղթեր են թողարկում, որտեղ քաղաքացիները կարող են արժեթղթեր գնել՝ այդպիսով մասնակցելով բիզնեսին փոքր ներդրումներով,- մանրամասնեց Փաշինյանը:

- Հաջորդ գաղափարը ներդրումների հայկական հիմնադրամի ստեղծման մասին է, որտեղ դարձյալ կոմերցիոն, բայց շատ մատչելի տոկոսներով փործ արվի վարկավորել բիզնեսը: Սրանք գաղափարներ են, որոնք քննարկվում են, որոնց հետ կապված խնդիրներ եւ բարդություններ կան, սակայն ուղղություններ են, որոնց մասին մենք մտածում ենք,- նշեց վարչապետը:

## «Armenia EXPO 2018» ԵՐԵՎԱՆՈՒՄ՝ 10 ԵՐԿՐԻ 200 ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ



*Երեւանի «Մերգելյան ինստիտուտ»-ի տարածքում գտնվող «Երեւան էքսպո» ցուցահանդեսային կենտրոնում սեպտեմբերի 7-ին մեկնարկեց «Armenia EXPO 2018» 18-րդ միջազգային ունիվերսալ առեւտրաարդյունաբերական ցուցահանդեսային ֆորումը: Միջոցառմանը ներկա էր Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը:*

Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միության նախագահ Արսեն Ղազարյանը, ողջունելով ներկաներին, հայտնեց, որ այս տարի ցուցահանդեսին մասնակցում է 200-ից ավելի սուբյեկտ:

Տաղավարներով շրջայց կատարելուց հետո, լրագրողների հետ զրույցում Արմեն Սարգսյանը հայտնեց, որ իրեն հատկապես հետաքրքրել էր այն մասնակիցների տաղավարները, որոնք կարողանում են իրենց արտադրանքը արտահանել:

«Armenia EXPO 2018» 18-րդ միջազգային ունիվերսալ առեւտրաարդյունաբերական ցուցահանդեսային ֆորումին մասնակցում են ընկերություններ Հայաստանից, Ռուսաստանից, Բելառուսից, Ուկրաինայից, Վրաստանից, Գերմանիայից, Լեհաստանից, Իրանից, Իտալիայից, ԱՄՆ-ից եւ Հնդկաստանից:

Ցուցահանդեսը կգործի մինչեւ սեպտեմբերի 9-ը:

## ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ՑԱԾՐ ՄԱՆԿԱՄԱՀԱՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԿՐՆԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ

*Հայաստանում վերջին տասը տարում մանկանց մահացության ցուցանիշը կրճատվել է մոտ մեկ երրորդով:*

Այս մասին սեպտեմբերի 6-ին Երեւանում մեկնարկած Մանկական վիրաբուժության եւ նյարդավիրաբուժության միջազգային համաժողովի բացմանն իր խոսքում ասաց Հայաստանի առողջապահության նախարար Արսեն Թորոսյանը:

Նրա խոսքով, Առողջապահության համաշխարհային կազմակերպության գնահատմամբ, Հայաստանը դասվում է աշխարհի ցածր մանկամահացություն ունեցող երկրների շարքը:

- Սա արդեն լուրջ ձեռքբերում է, եւ այդ գործում մեծապես կարեւոր է ոչ միայն մանկական վիրաբույժների դերը, այլեւ համաժողովների, հանդիպումների շնորհիվ ջանքերի մեկտեղումը,- ասաց նա:

Մանկական վիրաբուժության եւ նյարդավիրաբուժության միջազգային կոնֆերանսը կազմակերպվել է Մանկական բժիշկների հայկական ասոցիացիայի, Մանկական վիրաբույժների ռուսական ասոցիացիայի, Մոլդովայի Հանրապետության մանկական վիրաբուժության ազգային միության եւ մանկական նյարդավիրաբույժների եվրասիական ասոցիացիայի կողմից:

Կոնֆերանսին մասնակցելու ցանկություն են հայտնել մի շարք մասնագետներ Ռուսաստանից, Մոլդովայից, Ռումինիայից, Ուկրաինայից եւ Վրաստանից: Այս գիտական ֆորումը կնպաստի բժիշկների որակավորման բարձրացմանը, ինչպես նաեւ լավ հարթակ կհանդիսանա մասնագետների շփման եւ համագործակցության համար:

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑԸ ՄՈՍԿՎԱ

*Սեպտեմբերի 8-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը աշխատանքային այցով կմեկնի Ռուսաստանի Դաշնություն: Նույն օրը Մոսկվայում կկայանա Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հանդիպումը: Այցի շրջանակներում, նախատեսված է նաեւ հանդիպում Մոսկվայի հայ համայնքի գործարար ներկայացուցիչների հետ:*

### ԱՐՄԵՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆԸ՝ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍ



*Հայաստանի արտաքին գործերի նախարարի ընթացիկ տարվա սեպտեմբերի 6-ի հրամանով, 54-ամյա Արմեն Վահանի Բայբուրդյանը նշանակվել է Լոս Անջելեսում Հայաստանի գլխավոր հյուպատոս:*

*Նշենք, որ Արմեն Բայբուրդյանը 1993-1995 թվականներին եղել է Հայաստանի գլխավոր հյուպատոս Լոս Անջելեսում, 1995-2012 թվականներին զբաղեցնում էր Հայաստանի ԱԳ փոխնախարարի պաշտոնը, իսկ մինչեւ նոր նշանակումը, պրոֆեսոր Բայբուրդյանը Մասաչուսեթսի համալսարանում դասախոսում էր քաղաքագիտություն:*

### ՍՏԵՂԾՎԵԼ ԵՆ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ

*Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ, ստեղծվել են Հովհաննես Թումանյանի եւ Կոմիտասի ծննդյան 150-ամյակները նշող հոբելյանական հանձնաժողովներ եւ հաստատվել դրանց անհատական կազմերը: Հոբելյանական հանձնաժողովներին հանձնարարվել է մեկամսյա ժամկետում մշակել հոբելյանական միջոցառումների ծրագիր՝ ծախսերի նախահաշիվները համաձայնեցնելով Հայաստանի ֆինանսների նախարարի հետ: Հանձնաժողովների նախագահ է նշանակվել Հայաստանի մշակույթի նախարար Լիլիթ Մակունցը:*

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՁՆԱԳՐԵՐ՝ ԱՐՍԻՆԵ ԽԱՆՋՅԱՆԻՆ ԵՎ ԱՏՈՄ ԷԳՈՅԱՆԻՆ



*Սեպտեմբերի 6-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը Հայաստանի Հանրապետության անձնագրեր է հանձնել ամուսիններ՝ կանադահայ հայտնի դերասանուհի Արսինե Խանջյանին եւ ռեժիսոր Ատոմ Էգոյանին:*

### «ԱՆԵԿԴՈՏՆԵՐԻ ՊԱՏ» ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

*«Գյումրին մեր տունն է» երիտասարդական նախաձեռնությամբ Գյումրու հենց կենտրոնում՝ Վարդանանց հրապարակի անմիջական հարեւանությամբ, Շահումյան 188 շենքի պատը վերածվել է անեկդոտների պատի:*

*Գյումրվա համով-հոտով անեկդոտները նաեւ ռուսերեն ու անգլերեն են: Պատն ավելի խոսուն է քաղաքին հատուկ կոլորիտային պատկերների շնորհիվ: Անեկդոտների պատ նախագիծն իրականացվել է Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի եւ Երեւանյան «ՕՍՄ» հիմնադրամի աջակցությամբ:*

CyanMagentaYellowBlack



## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

### ՍԵՊՏԵՄԲԵՐ

*8.09.2018 Ս. Կույս Մարիամի ծնունդը Աննայից*

***9.09.2018 Բարեկենդան Սուրբ Խաչի պահոց***

*Բարեկենդանը պահքին նախորդող կիրակին է, որը նվիրված է տաղավար տոներից մեկին՝ Խաչվերացին եւ տեւում է երկուշաբթիից մինչեւ շաբաթ:*

## ՖՈՒՏԲՈԼ

### ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՏԵՍԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

#### ՂԱԶԱԽՍՏԱՆ-ՎՐԱՍՏԱՆ՝ 0:2, ՀԱՅԱՍՏԱՆ-ԼԻԽՏԵՆՇՏԵՅՆ՝ 2:1

Ինչպես արդեն հաղորդել ենք, ՈՒԵՖԱ-ի հավանու ներքո անցկացվում է Ազգերի լիգայի բացարձակապես նոր մրցաշար, ինչը թիմերին հնարավորություն է տալիս անցկացնել հանդիպումներ գրեթե նույն կարգի եւ մակարդակի հավաքականների հետ: Մրցաշարին մասնակցում են եվրոպական երկրների բոլոր 55 հավաքականները, որոնք բաշխվել են 4 լիգաների: Թիմերը հայտնվել են 10 խմբերում՝ 5-6 հավաքականով: Յուրաքանչյուր խմբի երկու լավագույն ընտրանիներ կխաղան եզրափակիչ փուլում:

Անեն լիգա կունենա իր փլեյ-օֆֆը, որն, իր հերթին, բաղկացած կլինի 2 մեկխաղային կիսաեզրափակիչներից եւ եզրափակչից: Յուրաքանչյուր փլեյ-օֆֆի հաղթող եվրո կստանա 2020-ի ուղեգիր:

Վրաստանի հավաքականը հանդես է գալիս D դիվիզիոնի առաջին խմբում: Նրա մրցակիցներն են Ղազախստանի, Լատվիայի եւ Անդորրայի հավաքականները:Հայաստանի հավաքականը եւս հանդեսն է գալիս D դիվիզիոնում, սակայն 4-րդ խմբում: Հայաստանի ազգային ընտրանու մրցակցներն են Մակեդոնիայի, Լիխտենշտեյնի եւ Ջիբրալթարի հավաքականները:

*Ազգերի լիգայի մրցաշարի իրենց առաջին հանդիպումը վրաց ֆուտբոլիստները անցկացրին մրցակցի դաշտում, իրենց ուժերը չափեցին Ղազախստանի հավաքականի հետ եւ հաղթեցին 2:0 հաշվով: Հայաստանի թիմը սեփական հարկի տակ 2:1 հաշվով առավելության հասավ Լիխտենշտեյնի հավաքականի նկատմամբ: Թե՛ Վրաստանի եւ թե՛ Հայաստանի հավաքականները իրենց ակտիվում գրանցեցին առաջին երեք միավորները:*

*Սեպտեմբերի 9-ին Վրաստանի թիմը սեփական հարկի տակ կընդունի Լատվիայի հավաքականին, իսկ Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմը իր հաջորդ հանդիպումը Ազգերի լիգայում կանցկացնի արտագնա խաղում՝ մրցելով Մակեդոնիայի հավաքականի հետ:*

## Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՐՈՐԴՆԵՐԻ

### ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԵԿՆԱՐԿՈՒՄ Է ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵԽՍՏՈՒԳՄԱՆ ԵՐՐՈՐԴ ՓՈՒԼԸ



***2018 թվականի հոկտեմբերի 1-ից Վրաստանում կկիրառվի տրանսպորտային միջոցների պարբերական տեխնիկական ստուգումների երրորդ փուլը, այս անգամ մեքենաների ստուգումը պարտադիր է դառնում 3000 խորանարդ սանտիմետր կամ ավելի հզորության շարժիչ ունեցող մեքենաների համար:***

Այս մասին հաղորդում է Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարությունը:

Ավտոմեքենան ստուգվում է հետեւյալ պարամետրերով. արտանետում, արգելակային համակարգ, ղեկային մեխանիզմ, շարժիչային մասեր, անվադողեր, տեսանելիություն, լուսարձակներ, լուսային ռեֆլեկտոր եւ էլեկտրական սարքավորում:

Տեխզննումը կարող է իրականացվել ամբողջ Վրաստանում գտնվող ստուգիչ կենտրոններում: Պետք է նշել, որ Ախալքալաքիում այդպիսի կենտրոններ չկան, եւ վարորդները ստիպված կլինեն տեխզննում անցնել Ախալցիխեում կամ այլ քաղաքներում:

Ավտոտրանսպորտային միջոցները ենթակա են պարբերական տեխնիկական ստուգման, ըստ իրենց կատեգորիայի եւ գրանցման ամսաթվի (ամսվա եւ օրվա): Ժամկետը լրանալուց հետո, նրանց նկատմամբ կկիրառվեն պատժամիջոցներ:

Պարբերական տեխզննման գործընթացի տեղեկատվական աջակցության նպատակներով, էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարարության ցամաքային տրանսպորտի գործակալությունում ստեղծվել է թեժ գիծ (1484), որը աշխատում է երկուշաբթիից ուրբաթ, ժամը՝ 10:00-18:00-ը: Բացի այդ, ըստ գործակալության տվյալների, զանգերի կենտրոնը կաշխատի սեպտեմբերի 29-30-ը (շաբաթ-կիրակի), ժամը՝ 10:00-18:00-ը:

### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ՎԻԴԵՈ-ՏՈՒԳԱՆՔՆԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

***Վրաստանի ներքին գործերի նախարարությունը վիդեո-տուգանքների առնչությամբ մեկնաբանություն է տարածել: ՆԳ նախարարությունը քաղաքացիներին հիշեցնում է, որ տուգանային կտրոնը police.ge-ում հրապարակելուց 30-րդ օրը համարվում է փոխանցված տուգանված անձին:***

Ներքին գործերի նախարարությունը, Վրաստանի վարչական իրավախախտումների օրենսգրքով սահմանված վիդեո-տուգանքների կատարման նոր կանոնի համաձայն, նախարարության police.ge պաշտոնական կայք-էջում սկսել է տեղադրել վիդեո-տուգանքի կտրոնը:

«2017 թվականի նոյեմբերի 1-ին գործարկված կանոնակարգի համաձայն.

Իրավախախտը, տուգանքը գրանցելուն պես, խախտման մասին կստանա կարճ հաղորդագրություն:

Ճանապարհային անվտանգության ոլորտում գործած իրավախախտման առնչությամբ վիդեո-տուգանքի մասին տեղեկությունը կարճ հաղորդագրության (sms) միջոցով ստանալուց հետո, տուգանքը 10 օրվա ընթացքում վճարելու դեպքում, անձը կօգտվի 20% զեղչից:

Եթե անձը վիդեո-տուգանքը չվճարի կարճ հաղորդագրությունն ստանալուց 10 օր ժամկետում, տուգանային կտրոնը նրան կուղարկվի փոստի միջոցով՝ գրանցման վայրի համաձայն:

Վիդեո-տուգանքը գրանցման վայրի համաձայն չստանալու դեպքում, 30-ից 60 օր ժամկետում, անձին կրկին կուղարկվի վիդեո-տուգանքը:

Տուգանային կտրոնը փոստի օգնությամբ երկու անգամ չընդունելու դեպքում, Վրաստանի ներքին գործերի նախարարությունը կապահովի տուգանային կտրոնի հրապարակավ տեղադրումը պաշտոնական կայքէջ՝ www.police.ge

Տուգանային կտրոնի հրապարակումից 30-րդ օրը այն համարվում է փոխանցված համապատասխան անձին:

Վիդեո կամ լուսանկարի վրա գրանցված իրավախախտման համար սահմանված գումարը քաղաքացին պետք է վճարի տուգանային կտրոնն ստանալուց 30 օր ժամկետում: Չվճարելու դեպքում, նրան կսահմանվի տույժ, որը չվճարելու դեպքում, կգործի Վրաստանի օրենսդրությամբ սահմանված բռնի կատարման ձեւը»:

## ԽԱՉԲԱՌ



**ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.** 1.Ռուս գրող, թարգմանիչ Սերգեյ …: 5.Լեռ Հայաստանում: 9.Կաթնամթերք: 11.Ոդիսեւսի կղզին: 11.Հայոց Արշակունի թագավոր, Արշակ թագավորի եղբոր որդին: 14.… ու գրականություն: 15.Իտալացի կոմպոզիտոր Պուչչինիի օպերաներից: 18.Սեխը բարբառով: 19.«Վրաստանա գյոզալները» երգի բառերի հեղինակ … Հովնաթան: 23.Մարդ, տղամարդ, նաեւ քարայր: 24.Հայոց կաթողիկոս Սահակ …: 27.Ալադինի «կամակատարը»: 28.… Արեշ, … Գվինեա: 29.Միս տվող, մսառատ: 30.Կասկածելի, ան…: 32.Ջերմության միավոր: 34.Հայ կին դեսպան Ճապոնիայում՝ … Աբգար: 37.Իգական անուն, որ նշանակում է հրեշտակ: 39.Ցուցական դերանուն: 40.Ֆրանսիացի գրող Բալզակի ստեղծագործություններից: 41.Կոր…, իդ…: 42.Պետություն Օվկիանիայում: 43.Ձիու ձայն հանելը, խրխնջալ: 47.«… լաճ, տնավեր» (Կոմիտաս): 48.Ճապոնիայի մայրաքաղաքը: 49.Ե՛վ Միխալկով, ե՛ւ Խրուշչով: 51.Ոչ վրայի, այլ …: 52.Ականջ, լսողության օրգան: 53.… ու բեր: 54.Ռումբ, պայթուցիկ: 55.Լեռնագագաթ Արեւմտյան Հայաստանում:

**ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.** 1.Թբիլիսահայ գրող … Խանջյան: 2.Ժամանակի միավոր: 3.Միջագետքի գետերից: 4.Սերձարեւադարձային միրգ: 6.Անագից շինված: 7.Հյուրանոց Թբիլիսիում: 8.Վերդիի օպերաներից: 10.Երկրամաս Ռուսաստանում: 12.Հայ գրող … Բակչի: 16.Աչքի մաս: 17.Կոնֆետի տեսակ: 20.Սուրբ … կղզի: 21.Երկրաչափական պատկեր: 22.Վանքային համալիր Հայաստանում: 25.Գետ Հայաստանի Սյունիքի մարզում: 26.Լեռնաշղթա Եվրոպայի եւ Ասիայի միջեւ: 28.Հայ բարերար Պողոս … փաշա: 31.Լեռնաշղթա Սեւանա լճի հյուսիս -արեւելքում: 32.Ուրմիա լճի այլ անուններից: 33.Դ.Աղայանի հեքիաթի հերոս: 35.Մետրոյի կայարան Թբիլիսիում: 36.Դաղձ, անանուխ: 38.Արտի թռչուն: 41.Պետություն, հայրենիք: 43.…-գործիքային համույթ: 44.Զինվորականների փոքր խումբ: 45.Տիեզերագնաց շուն: 46.Բերդաքաղաք Արեւմտյան Հայաստանում: 48.Հոր կամ մոր մայրը: 50.Բնակարան, ապրելու, բնակվելու տեղ:

*Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ*

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

**ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.** 1Պենդերեցկի: 6.Գորշ: 10.Աղվերան: 11.Նախապապ: 13.Կլարա: 14.Սին: 15.Արտեկ: 19.Արայի: 21.Անապա: 24.Ադիդաս: 25.Նոսր: 27.Անկոչ: 28.Սեդա: 29.Ասիա: 30.Քարհատ: 32.Դեա: 33.Դար: 34.Կորալ: 37.Ուր: 38.Լի: 39.Ինի: 40.Երբեք: 41.Շալվա: 43.Աթոռ: 45.Լոզան: 47.Դրո: 48.Աքիլլես: 59.Անուշ: 50.Նշան: 51.Անի:

**ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.** 1.Պրահա: 2.Նավթ: 3.Եվրո: 4.Երնեկ: 5.Կոնյակ: 7.Որպես: 8.Շոպեն: 9.Ախթամար: 12.Ետադաս: 16.Երանի: 17.Կասկադ: 18.Փամբակ: 20.Ինչքան: 22.Ավետ: 23.Արագվի: 26.Սարդուր: 28.Սար: 29.Ապրիլ: 31.Հարբել: 35.Անվարան: 36.Լիաթոք: 40.Երազել: 41.Շուշան: 42.Անաշա: 44.Ռալֆ: 46.Զանի: 49.Ան:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445